Հայ գրականության օլիմպիադա-2017

Մարզային փուլ

XII դասարան (տևողությունը՝ 150ր.)

1.Ո՞վ է Գուրգեն Մահարին (4-5 տողով պատմի՛ր նրա մասին) (1մ.): Ի՞նչ թեմա է շոշափում « Ծաղկած փշալարեր» վիպակը, բացատրի՛ր վերնագիրը՛ (1մ.). այլ ազգի ո՞ր գրողն ունի նմանատիպ հայտնի ստեղծագործություն (0,5մ.): Հիմնավորի՛ր ապրելու ցանկության հաղթանակը(1,5մ.):

(4մ.)

2.Ի՞նչ է նշանակում « Նահանջը առանց երգի» վերնագիրը (1մ.): Շարունակվու՞մ է այդ նահանջը ցայսօր (1մ.): Նամակով համոզիր քո հասակակցին՝ չնահանջել արմատներից (1մ.): Կարո՞ղ ես հակադրվել Շահնուրին (1մ.):

(4մ.)

3.Ըստ Զարյանի «Երկու հանճարեղ գլուխ» բանաստեղծության՝ ո՞վ է մարմնավորում «հոգեկորով , հպարտ, ինքնավայել » մարդու իդեալը (1մ.):
Կա՞ քո միջավայրում նման մարդ. նկարագրի՛ր (1մ.):
Ո՞ւմից է ներումն հայցում Զարյանը «Զրույց մեռած բանաստեղծի հետ» բանաստեղծությունում (1մ.):
Արդարացնո՞ւմ ես բանաստեղծի ապաշխարանքը (1մ.): (4մ.)

4.Ի՞նչ հոգեվիճակ է նկարագրում Համո Սահյանը «Չես ասի ոչ մի բառով» բանաստեղծության մեջ: Ինչի՞ց է տագնապում բանաստեղծի հոգին: Բանաստեղծությունը գրի՛ր անգիր:
«Օրը մթնեց» բանաստեղծության խոհը ներկայացրու՛ քո բառերով : Բացատրիր՝ «տխրությունս կամաց – կամաց փոխվում է լացի»: (4մ.)

5.Ի՞նչ շրջասույթ գիտես Հրանտ Մաթևոսյանի մասին (0,5): Ո՞վ է «Աշնան արև» վիպակի հերոսուհին (0,5մ.): Չարացա՞ծ էր արդյոք հերոսուհին իր ճակատագրի դեմ (1,5մ.): Նկարագրիր Սիմոնին՝ ըստ հերոսուհու (1,5մ.):

(4մ.)

Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աբազյան